

ՄԻԻԹԱՐ ԱՐԲԱՀՕՐ ՄԱՀՈՒԱՆ

200-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ ՍԱՐԳՈՒԱԾ ՀԱՆԴԵՍՆԵՐ

1949 ՏԱՐԻՈՅՆ ԸՆԹԱՅՔԻՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

ՅՈՒՆԻՍ 5

Միթար Արբազոր մահուան 200ամեայ յորելեանին բացման զոյգ հանդէսներէն վերջ, որ տեղի ունեցան Ապրիլ 27ին Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, եւ Մայիս 1ին Սուրբ Ղազար, կրկին աւելի փառաւոր ձեւով արծարծուեցաւ Յորելեանի յիշատակը, Հոգեպաշտեան օրը Յունիս 5ին: Այդ տօնախմբութեան առթիւ Վենետիկ կը հասնէր Ֆրանս. Պետութեան արժանաւոր ներկայացուցիչը՝ նախկին Նախարար Ժիւսթէն Կոտար իր ազնուափայլ Տիկինը հետ, բերելով Ֆրանսական Պետութեան կողմէ Պատուոյ Լէգէոնի ասպետական Շքանշանը Ռափայ Գերապայ-ժառ Արբազոր:

Առաւօտեան ժամը 10ին հանդիսաւոր ձայնաւոր պատարագ մատուց Ռափայ Վեհը, ի ներկայութեան բազմաթիւ ժողովրդեան մը, բաղկացած ազգայիններէ եւ իտալացիներէ, Նիւր. Ժիւսթէն Կոտարը՝ Մալթայի Ասպետներու տարադով, Սրբ. Շիրմի ուրիշ երեք ասպետներու, եկեղեցական ու քաղաքական բարձրաստիճան անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ Վենետիկի Ֆրանս. Հիւպատոսի՝ իր Տիկինը հետ, իտալիոյ Կրթական Նախարարի կնոջ՝ Տիկին Կոնսլլայի, եւ քաղաքի զինուորական ու նաւային հրամանատարութեան կողմէ հրաւիրուած անձնաւորութիւններու:

Յետ միջօրէի տեղի կ'ունենար Գրական երաժշտական հանդէսը Մ. - Ռափայէլեան վարժարանի Թիէփոլեան Դահլիճին մէջ, որուն կը նախագահէր Միթարանութեան Առաջնորդը, իր երկու կողմերը ունենալով Ֆրանսական ու իտալական Կառավարութիւններու բարձր ներկայացուցիչները՝ նախկին Նախարար Ժիւսթէն Կոտար եւ ձ.

Փոնթի՝ իտալացի երեսփոխանը՝ հանդերձ իրենց բնականաւոր պարագաներով: Ներկայ էին նաեւ Ֆրանսայի Հիւպատոս Հիւպէր Էլի եւ իր Տիկինը, Գրական կաճառներու նախագահներ, քաղաքային եւ եկեղեցական իշխանութիւններու կողմէ հրաւիրուածներ, իտալիոյ եւ Ֆրանսայի ազգային դպրութեան Վենետիկ ժամանած ազգայիններ, ուսուցչապետներ, ծանօթներ եւ թերթերու խմբագիրներ: Տեղական Մամուլն ու Չայնապոլսը արդէն տուած էին ազգը այս մեծաշուք տօնախմբութեան՝ Միջազգային բազմալեզուեան հանդէս բացատրութեամբ բնորոշելով դայն:

Հանդէսը կը բանար Ռափայ Ընդհ. Արբազայրը Ֆրանսերէն ճառով մը, յետ Ֆրանսական եւ իտալական ազգ. քայլերդներու: Ան ցոյց կու տար օրուան տօնին բարձր նշանակութիւնը, Միթար Արբազոր ջանքերով կատարուած ազգային զբաղման-ընկերային վերածնունդի դերը հայ ժողովուրդին համար, Միթարեան Կաճառին բեղմնաւոր դործունէութիւնը ի ծաւալումն Ֆրանսական ու իտալական մշակոյթին Արեւելքի մէջ, մեր վարժարանական դործունէութիւնը Ֆրանսայի, իտալիոյ եւ Արեւելքի մէջ: Յետոյ կը յայտնէր իր եւ Միթարանութեան կողմէ ջերմազին շնորհակալութիւններ Ֆրանսա-րութեան, որոնք իրենց յարգանքի ողջոյնը կը բերէին Միթարի անմահ Յիշատակին, այնքան խանդակաթ սիրով մը:

Հաջիւ Ռափայ Վեհը վերջացուցած էր իր խօսքը, ահա Նիւր. Ժիւսթէն Կոտար ոտքի ելլելով եւ իր կողքին ունենալով Ֆրանսացի Հիւպատոսը, Պր. Հիւպէր Էլի, ուղղեց հրճուողին հետեւեալ խօսքերը.

« Ֆրանսական Հասարակապետութեան



Յանուն ֆրանսական Կառավարութեան եւ Նախագահ Օրիոյի Ժիւսթէն Կոտար կը կախէ Գերպ. Արբազոր կուրծքին Պատուոյ Լէգէոնի ասպետական շքանշանը: (Նուսնկ. ԹՈՒՄԱՆԵԱՆ)

կողմէ առանձնայատուկ պաշտօնով մը կու գամ ներկայացնելու ջերմագին շնորհաւորութիւններ Ձեր մշակութային եւ կրթական օգտակար գործունէութեան հաւանքով, որ կատարած էք աւելի քան երկու միլիարդ, Վենետիկի խաղաղ մէկ անկէս դար՝ յօգուտ ձեր ժողովուրդին եւ ի ծաւալումն ֆրանսական լեզուի եւ գրականութեան Արեւելքի մէջ: Ի վարձատրութիւն այդ Ձեր քանկագին ջանքերուն եւ աշխատութեան, յանուն Ֆրանսական Կառավարութեան 11 Մայիս 1949 Վեհին, եւ յանուն Ֆրանսական Հասարակապետութեան Նախագահին՝ Վ. Օրիոյի, Պատուոյ Լէգէոնի Ասպետութեան բարձր շքանշանով կը պատուենք Ձեզ (Chevalier de la Légion d'honneur):

Այս համառօտ ու տաք ուղերձին յաջորդեցին շնորհալից ծափեր: Ու ապա ինքնին Նախարարը կախեց Գերպ. Արբազոր կուրծքին Ֆրանսական Կառավարութեան այդ պատուանշանը:

Պօսք առաւ ապա Ֆրանսացի Հիւպատոսը՝ Պր. Հիւպէր Էլի:

Համառօտ ակնարկէ մը վերջ Հայաստանի պատմական անցեալին, իր փառաւոր ու տխուր էջերուն, անցաւ եւ կեդրոնացաւ Միթար Արբազոր զբաղման ու ընկերային մեծ վերելքին ու այն վերանորոգական ճիգերուն, որով ան Եւրոպայի սրտին վրայ, Վենետիկի խաղաղ մէկ անկէս դար, ապահովեց վայրաժատին հայ ժողովուրդին համար լոյսի եւ գրականութեան կեդրոն մը: Եթէ Հայաստան այսօր աշխարհագրականօրէն ու պատմականօրէն վերականգնած չէ, սակայն ապահովուած է իր մշակոյթը, այդ մեծ Հայուն ազգանունէր դործունէութեամբ, եւ որուն պանծալի յիշատակն է որ հոս կը տօնախմբուենք, յիշատակը իր մահուան՝ որ անմահութիւն մ'է, քանի որ ան զիտցաւ ստեղծել զորք մը, որ պիտի ապրի դարեր: Ձեր Ս. Ղազարը սիրելի տունն է հայուն, որբանն է հայ մշակոյթին, ուր դուք զիտէք այնքան խնամքով պահպանել ձեր նախնիքներու թանկագին ձեռագիրները, ձեր եկեղեցւոյ ծէսը եւ հայրենական աւանդութիւնները:

Աւելի մտերմիկ շեշտ մը տալով իր խօսքին՝ ըսաւ. Հայ եւ Փրանս կապերը շատ հին են, սկսեալ միջին դարէն մինչեւ մեր օրերը, մինչեւ միջազգային երկրորդ պատերազմի օրերը, երբ ձեր երկրասարդութիւնը մերիններու կողքին՝ իր կեանքը դո՛ւնէջ Փրանսայի եւ մարդկութեան ազատութեան համար: Այդ ջերմ յարաբերութիւններու յայտնի ապացոյց է նաեւ նախկին Նախարար Ժիւսթէն Կոտարի ներկայութիւնը հոս Ձեր կերտած այս հոյակապ Տան մէջ, ուր եկած է ան իրեն ներկայացուցիչ Փրանսական Կառավարութեան, բերելու մեր յարգանքը եւ բարձր գնահատանքը Ձեր այնքան թանկազին դործունէութեան համար, որուն կը մաղթենք անկեղծօրէն յարատեւութիւն եւ յաջողութիւն:

Յաջորդեց հոս Մխիթար Աբրահօր երկու երգերուն «Ձքեղ Ս. Հայր Անտոնիէ»-ի եւ «Գովեալ դասուց»-ի համանունազը, նուազախումբի վերածուած Ա. Փոնցիլաքուայէն:

Խանդավառ շեշտ մ'ունէր ճառը զոր խօսեցաւ Ժիւսթէն Կոտար: Ու նախ յայտնեց իր հոգեկան հրճուանքը այն պատուին եւ պաշտօնին համար, որ իրեն յանձնուած էր այս պանծալի յիշատակին առթիւ ներկայացնելու Փրանսական Կառավարութիւնը: Ս. Ղազար այսօր կը ներկայացնէ, ըսաւ, հայութիւնը, անոր հաւատքը, մըշակոյթը, անոր պատմութիւնը, որ այնքան փայլուն է Ձեր գրած է մարդկութեան կեանքին մէջ...: Հայաստանի եւ Փրանսայի կապերը կը սկսին Խաչակրութեան օրերէն, երբ ձեր իշխանները ինչպէս Կոստանդին՝ որդի Ռուբէնի, եւ Օշին Գ. իրենց բարոյական եւ նիւթական օգնութիւններով այնքան նպաստեցին սրբազան պատերազմին. ու Փրանսա փոխադարձաբար տուաւ ասանջականութիւն ձեր վերջին թագազորի Լեոն Զ. Լուսինեան թագաւորին, որուն շիրմը կը գտնուի Փրանսայի միապետներու դամբաններու շարքին: Յիշեց դորովալիբ շեշտով մը 1848ի Յեղափոխութեան ջրջանին հայ երիտասարդութեան բերած նպաստը զրով եւ բազմակողմ, ինչպէս քսաներորդ դարու առաջին եւ երկրորդ միջազգային պատերազմի օրերուն հայ ժողովուրդին համակրանքը

եւ կապը Փրանսայի հողին, ուր անոնք հիւրասիրուած էին, փախտական ջարդերէն եւ աւերումներէն: Փրանսայի մէջ դարձեալ ձեր ժողովուրդը, ըսաւ, ստեղծեց զբաղանջ շարժում մը նմանութեամբ մեր զբողներուն, բեղուն կեանք մը մամուլով եւ կրթական դործունէութեամբ. այդ շարժումի կեդրոնը եղաւ Ձեր վարժարանը Փարիզի մէջ, որուն բացման ճառը խօսած է բանաստեղծ Լամարտինը, եւ յետոյ Ձեր Սեւրի նորակառույց վարժարանը, առարկայ մեր սիրոյն եւ քաջաբերանքին:

Բայց դուք, Մխիթարեան հայրեր, այդ կապը ամրացուցիք երբ լծուեցաք մեթոտիկ եղանակով մը հայացնելու մեր գրականութեան նշանաւոր դէմքերը: Դուք ձեր Ս. Ղազարը դարձուցիք յետոյ ոչ միայն Փրանսայի, այլ բոլորեղալ Եւրոպայի հետ միութեան զեղեցիկ զօր մը: Ս. Ղազար դալու է, տեսնելու համար այն մեղուաջան դործունէութիւնը, որուն բարիքները կ'երթան ծաւալել հայ դպրութիւնը մէջ, սիրելով ամենուրեք լոյս եւ կեանք, հողի եւ մտքի ճշմարիտ կեանքը:

Իմ սէրս եւ համակրանքս Հայաստանի եւ հայ ժողովուրդի հանդէպ կը սկսի մանուկ հասակէս, երբ Սրբազան Պատմութեան մէջ սորված էի Արարատ լեռան անունը, որուն գագաթին վրայ հանդէպաւ Նոյեան տապանը: Ու վերջացնելով իր խօսքը, կը մաղթեմ, ըսաւ, որ այն ազանին որ երրորդ անգամ չվերադարձաւ տապանը, սաւառնի թող Հայաստանի երկրնքին վերեւ եւ ըլլայ հայկական ազատութեան եւ վերանորոգման աւետարեր ազանին:

Հանդէսին առաջին մասը փակուեցաւ Ս. Սպենդիարեանի «Երեւանի Էդիւտնէրը» նուագային համերգով, որ իր արեւելեան դոյնին ու մոթիւներու եղականութեան համար մեծապէս հաճելի անցաւ եւրոպացի ունկնդիրներուն: Նուագախումբը կը բաղկանար երեսուն հոգիէ, կառավարուած Մայիսթրոյ Ծ. Պալպոնիէն:

Տասը վայրկեանի դադարէ մը վերջ Օր. Մարի Պոտուրեան իր զգայուն ձայնով մեներգեց զեղեցիկ կտորներ՝ Շոփէնէն եւ

Ռաւելէն, ընկերակցութեամբ դաշնամուրի՝ Ուսցալ. Կ. Պիանքիի կողմէ:

Խօսք առաւ ապա ի դիմաց Իտալ. Կըրթական Նախարարութեան՝ Երեսփոխան ձիովաննի Փոնթի, այսպէս սկիզբ տալով իր ճառին. «Խորհրդարանի Փոխ Նախագահ Փիլէշիոնի եւ Կրթական Նախարար Կոնէլլա, թէպէտ խոստացած էին պատուել իրենց ներկայութեամբ այս զեղեցիկ ու յիշատակալից համախմբումը, սակայն Կուսակցութեան Համադրումարը (որ հոս քաղաքիս մէջ տեղի ունեցաւ այս օրերս) դաժնեցնելով ճիշտ այս ժամուս իր փակումի ամէնէն տենդազին պահուն մէջ՝ ստիպուեցան բացակայիլ, յանձնելով ինձի հոս զիրենք ներկայացնելու փափուկ պաշտօնը:

Պատիւ է մեզի, ըսաւ ան, հոս Իտալիոյ մէջ ունենալ կեդրոնը Մխիթարեան դործունէութեան, հիմնուած այն մեծ Մարդէն՝ որ եղաւ Մխիթար, եւ որուն մահուան 200ամեայ յորեկանը այս տարի կը տօնախմբուի: Մխիթարեանները խոշոր դեր մը կատարած են՝ զօղելու իրարու արեւմուտքն ու արեւելքը իրենց զբաղանջները կեանքով: Անոնք թարգմանած են մեր գրականութեան երեւելի դէմքերուն դործերը հայերէնի, սկսեալ Տանթէի «Աստուածային կատակերգութենէն» մինչեւ վերջին հեղինակներու դործերը, ինչպէս է Փափիլիի, Ատա Նեկրիի: Վենետիկի եւ Մխիթարեան Հայրերու միջեւ կայ շատ զեղեցիկ ու պատմական կապ մը, նուիրազօրծուած ու սիրելի. անոնց կողքին արուեստի թանգարան մ'է միանգամայն, ուր մեր ժողովուրդը եւ օտար այցելուներ ամէն տարի կ'երթան արեւելեան արուեստին զեղեցիկութիւնները վայելելու: Թուականէս ճիշտ հարիւր տարի առաջ Ս. Ղազարի կողեակը եղած է նաեւ Վենետիկի պատրիարքին ապահով ապաստանարանը, երբ ան յեղափոխականներու հետապնդումներէն ազատելու համար, չորս 20 օր վայելած է քաղցր ասանջականութիւնը այս ոսկի սիրտ կրող Մխիթարեան հայրերու: Ես իսկ շատ անգամ իմ անձիս վերայ զգացած եմ իրենց ջերմ հիւրասիրութիւնը, եւ ոչ միայն իրենց՝ այլ նաեւ իրենց աշակերտներուն, որոնց պատահելու առիթն ունեցայ վերջերս Եդիպոսի մէջ: Կը մաղթեմ ի սրտէ, որ այս լոյսի կեդրոնը, զոր անոնք հիմնած են Վենետիկի

խաղաղ լճակին վրայ, շարունակէ իր բազմազան գործունէութիւնը յօգուտ իրենց տառապեալ ազգին եւ ի միութիւն արեւելեան եւ արեւմտեան մշակոյթներու:

Երեսփոխան Զ. Փոնթիի ճառը շատ անգամներ ընդհատուեցաւ բռն ծափերով:

Թաւջութակի մենանուագ մը կատարեց դեռաւոր հայ Օր. Եդիսարէթ Միլոնեան, ընկերակցութեամբ դաշնամուրի իր քրոջ Օր. Ալենէսի, չսպասուած նորութեան պէս ողջունուելով հրաւիրեալներէն:

Հանդէսը կը փակուէր Մխիթարի նուիրուած «Ձարթիբ աշխարհ» քայլերգով, երգուած Վանքի աշակերտութեան կողմէ, ընկերակցութեամբ նուագախումբի:

Բարձրաստիճան հիւրերը եւ մտերիմ բարեկամները պատուասիրուեցան յետոյ արեւելեան սուրճով եւ ըմպելիով:

—

ՕԳՈՍՏՈՍ 14.

Օգոստոս 14ին, տօն Վերափոխման Ս. Աստուածածնի, Մխիթար Աբրահօր մահուան 200ամեայ Յորեկանը կրկին տօնուեցաւ, եւ այս անգամ համազգային դոյնով: Միացեալ Նահանգներէն, Արժանթինէն, Անգլիայէն, Փրանսայէն, Չուիցերիայէն, Եդիպոսէն, Սուտանէն, Կիպրոսէն, Սիւրիայէն, Լիբանանէն եւ Պոլսէն եկած ստուար թիւ մը ազգայիններու՝ ներկայ եղաւ առաւօտը քառաձայն Ձայնաւոր Պատարագին, մատուցուած Գերա. Աբրահօրմէն, Ս. Ղազարու եկեղեցոյն մէջ, Մխիթար Աբրահօր շիրմին մօտ:

Մուրաւ-Ռափայէլեանի մէջ, կէսօրէ վերջ, դարձեալ ողբերգութիւն, դարձեալ փառասօն: Նոյն ազգայինները եւ անոնց հետ նաեւ բազմութիւն մը խալապի զեղարուեստագէտներու, եւ Գրական կաճառներու ներկայացուցիչներ եկած էին պատուելու մեղ: Գերա. Աբրահօր՝ Սրապիոն Վ. Ուլուհոճեանի բացման խօսքէն վերջ, որով ան համաօտ բայց զեղեցիկ պատմական ակնարկով մը պատկերացուց Մխիթարի հոգեկան մեծութիւնը, բանաստեղծ Սահակ Վ. Տէր-Մովսէսեան, շեշտելով Մխիթարի մէջ Հայկական Վերածնունդի հիմնադիրը, յետ խաւարի դարերուն: Եզրակացուց թէ ազգի մը գանուածային վերելքին համար անհրաժեշտ



Ժիրայր Գանրաթեան

են ոչ միայն լուսամիտ անձեր, այլ նաեւ սէր ու միութիւն, որպէսզի զործ մը յաւատեւէ: Բանախօսութիւններ ըրին նաեւ Իտալիոյ Մշակութային Միութեան Նախագահ՝ Բժ. Արամայիս Սրապեան, եւ Իտալահայ Գաղութային Կոմիտէի ներկայացուցիչ Բժ. Տիգրան Ալեքսանեան, խանդավառ արտայայտութիւններով:

Բանախօսութիւններու շարքը փակեց Գերպ. Պետրոս Արքեպ. Քէտիճեան, անդրադառնալով Միւթարի քարոզած Կրօնքի եւ Ազգի զեղեցիկ վարդապետութեան շուրջ: Մեր ազգին մէջ, ըսաւ, անկարելի է որ սէր եւ միութիւն ստեղծուի, եթէ այս վճիռ ու կենսական ըմբռնումը չընդհանրանայ: Յաւալի է որ Մեծն Միւթարի մահէն երկու հարիւր տարի վերջն ալ, տակաւին կան մեր մէջ որ չեն հետեւիր անոր այս լուսաւոր սկզբունքներուն, եւ հետեւաբար կը փտանգուի նաեւ սիրոյ եւ համեղբայրութեան դադարը:

Գեղարուեստական բաժնին մէջ Օր. Նըւարդ Յակոբեան մեներգեց Կոմ. վարդապետէն եւ Գ. Ալեքսանէն սիրուն կտորներ, վերաբժարձելով այսպէս ողբացեալ երկ-տասարդ հայ երգահանին եւ Միւթարեան

նախկին սանին յիշատակը Միւթար Արքաճօր նուիրուած տօնախմբութեան փառաբանութեան մէջ: Յիշատակենք այս ստեղծութիւնը քաջապատեմք Գ. Արա Պարթեւեան, իր արուեստագէտի խանդակաթ սիրով եւ յուզումով ծագեցնելով մը զբաւ իր եւ երգչախումբին կողմէն Գուրգէն Ալեքսանի շիրմին վրայ, որ կը հանդէս Ս. Ղազարու մէջ:

Հանդէսին շրջաններէն էր պատանի ջութակահար՝ Ժիրայր Գանթարճեան, Եղիպտոսի երաշք տղան, որ վերջերս անցած էր Իտալիա, թերադրութեամբ հոգաւոր Վաղա Փրիհոտա չեխ ջութակահարին, որ երկու տարի իր քով առնելէ եւ մարդելէ վերջ հայ պատանին, հիմա համար էր դայն հոգակի եւ փառքի ասպարէզը: Ժիրայր Գանթարճեան արդէն նոյն տարւոյն Մայիս ամսուն, Ճենովայի Դըքսական պալատին մէջ իր տաղանդաւոր յայտնութիւնը ըրած էր զմայլեցնելով խաղացի զեղարուեստասէրները:

Հրաւիրուած յատկապէս Վենետիկ, Մըթար Արքաճօր Յորել. Յանձնախումբի կողմէ, ան վերստին մեծ խանդավառութիւն եւ սքանչացում արթնցուց իր շուրջ:

Յայտարարը կը բաղկանար ջութակի ամէնէն զփուարին կտորներով: Ան զարմանալի արուեստով մը նուագեց Մողարթի ան Սի Պէմոլ մամէօր Սօնաք-ը, Պարի Չիաֆֆոնա-ն, Ախրոնի Երաշխակա Մեդիդի-ն, Ա. Սաչատուրեանի Համերգին Անտանք-ն, Փականիինի Վարիասիոն-ներ-ը, Սարադաթի Ծափաք-էառօ-ն:


Իսկական յայտնութիւն մ'էր ճշմարտ արուեստագէտի, որ անսահման հոգեկան վայելք պատճառեց բոլոր ներկաներուն առ հասարակ: Ան իր ջութակի դասերը սկսած է Եղիպտոսի մէջ չորսուկէս տարեկանին եւ վեց տարեկանին առաջին անգամ ներկայացած է հասարակութեան առջեւ: Ինք տարեկանին ամենակատարեալ ճշգրտութեամբ նուագած է Վիպարտի ան Լա Միւնէօր Համալուաքը, Շուպէրթի ան Ռէ Մամէօր Սօնաք-ն, ինչպէս նաեւ Վալէքի Փէրփէրուում մոպիլէ-ն: Տասներկու տարեկանին Մէնտրլսոնի, Փականիի ամենազփուարին կտորները, եւ ա-

ւելի ուշ՝ 15 տարեկանին Աղեքսանդրիոյ Ալեքսանդրա թատրոնին մէջ ուրիշ կտորներու հետ նաեւ Փականիինի Թիւ 1 Համալուաքը:

Վենետիկի մէջ տուած համերգը իսկապէս յաղթանակ մը եղաւ իրեն համար: Մենք լսած էինք իր անունը, բայց չէինք կրնար երեւակայել այս աստիճան ջերմ զգայնութիւն եւ կատարելութիւն իր նըւաղին մէջ: Տասնեւեօթնամեայ հրաշք պատանին, խորապէս զիտակից իր կատարածին, անտարակոյս կը խոստանայ դառնալ միջազգային անուն մը: Այնիւ եւ լուրջ իր շարժումներուն մէջ, առանց ո'ր եւ ճիշդի եւ արուեստակութեան, ան զիտէ ողի եւ կեանք տալ իր նուագած կտորին, որուն մէջ խորապէս թափանցելու կարողութիւնը ունի: Զմայլելի է մանաւանդ քեֆնիք. յատկութեամբ, ճշգրտութեամբ եւ հնչականութեամբ իր լաւերուն, ուժեղ եւ քնքուշ թրթռացումներով՝ ան կու տայ հարազատ դոյնը հեղինակի մտքին ու զգացողութեան, ստեղծելով ունկնդիրներուն մէջ հոգեկան վիճակներ յուզումի եւ հիացումի: Չիաֆֆոնայի նուագը (որուն համար խաղացի ճարտար ջութակահար մը, յետ նուագահանդէսի, ըսաւ թէ պատանին զերազանցեց իր վարդապետի ժամանակին ունեցած յաջողութիւնը այդ զփուարին կտորով), արդարեւ շատ յաջող էր, ուր հայ ջութակահարը զգացումի խորութեամբ մը նուրբէն դէպի ուժեղ, աշխոյժ մատնահարումներով, եւ ամենալայն երգահանական բաղմալար ու բաղմալոյն արտայայտութիւններով յուզեց եւ մոզեց մեզ: Ժիրայր Գանթարճեան վստահ է իր ճարտին արդիւնքին վերայ. անիկա ցոյց կու տայ արդէն այնպիսի յատկութիւններ, որ բացառիկ յատկութիւնները եղած են աշխարհի մեծագոյն ջութակահարներու, եւ մենք լիալոյս ենք որ ան պիտի դառնայ միջազգային անուն մը, եւ պարծանքը հայ անունին:

Կը մաղթենք իրեն ամենալայն յաջողութիւններ:

Հ. Մ. Ճ.



Գ. Ր. Ա. Խ. Օ. Ս. Ա. Կ. Ա. Ն.

ԼՈՒԹՖԻ ՄԻՆԱՍ. «Արփիական» 1947, Պոսթոն. Գին 1,50 տոլար:

Ամերիկահայ բանաստեղծ Լուիս Մինաս երեք տարի առաջ հրատարակեց իր «Արփիական» հատորը, բանաստեղծութիւններ չորս լաւերու վրայ. ա) Սեր ու միւրց, բ) Մտերմական, գ) Փառք ու արցունք, դ) Եղիցի լոյս:

Գրաւիչ է հոն գաւառի հոգին, պատկերացում զիւղական ապրումներու ու բնութեան մէջ: Կը փորձուիմ ըսելու՝ որ ինչ որ Համաստեղ կատարած է արձակով, նոյնը Լուիս Մինաս փորձած է ընել ոտանաւորով:

Քիրթնածներու այդ նկարագրէն կը հասկընաք՝ թէ բանաստեղծը գաւառացի մ'է, որ իր երեւակայութեան մէջ պահած է դեռ այն քաղցր ապրումները, որ իր երջանկութիւնը կազմած են երեմի, և որոնց վերջնական մէջ ան կը զգայ նորէն հոգեդարձ մը դէպի գիւղի պարզ ու երջանիկ կեանքն ու սէրը:

«Ախ, ան օրերն որքան չուտ դարձան հին յուշ ու մշուշ» (Յուշ ու Մշուշ):

Զկարծուի սակայն որ «Արփիական» գիւղէն ներշնչուած երգեր միայն կու տայ. ոչ, ան աւերիկեան միջավայրի հսկայական շարժումն ու արտադրական, մեքենագործական աշխարհի փորձառութիւնն ու ապրումներն ալ ունեցած է, որոնք սակայն չեն գրաւեր իր սիրտը. այդ կեանքին հանդէպ չունի համակրանք, մանաւանդ թէ այդ կեանքին մէջ կը տեսնէ մարդկութեան կործանումը, հոգեկանութեան փճացումը: Կ'երգէ որբերը, թշուառները, հացի համար պայքարող ու քրտնոգ բանուորները. կ'երգէ Սպանիական պատերազմին աղետալի ընդհանրութեամբ համայնավար ու ազգային ուժերուն հետ, վերջին միջազգային պատերազմին՝ կոիւներու որջ դարձած Եւրոպան՝ որ ջահակիրն էր քաղաքակրթութեան, հիմա դարձած աւեր ու ծուխ: Դաքաղ շէշտ մը զրած է Լուիս Մինաս թէ Սպանիա և թէ Եւրոպա քերթնածներուն մէջ, ու մարդկային աղետին անաւորութիւնը արտայայտող նկարագրական իրադարձ եղանակ մը, ընտրութեամբ բառերու և դարձուածքներու:

Լուիս Մինասի մէջ կ'ապրին նաեւ հայկա-